# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**6 հունիսի 2024 թվականի № 242-Ա**

## ՌՈՒԶԱՆՆԱ ԱՎԱԼՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԱՐԱՄՈՒՍԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 32.1-ին հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի № 129-Ն որոշման № 1 հավելվածի 85-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Արամուսի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 3-ի № 3 որոշումը, եզրակացությունը և *Ռուզաննա Ավալյանի*՝ 2024 թվականի հունիսի 3-ի դիմումը՝ **որոշում եմ.**

1. ***Ռուզաննա Իսրայելի Ավալյանին*** 2024 թվականի հունիսի 6-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Արամուսի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր մեկ տարի ութ օր ժամկետով:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի՝ 2024 թվականի ապրիլի 30-ի *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Արամուսի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատարի ազատման և տնօրենի նոր պաշտոնակատարի նշանակման մասին»* № 192-Ա որոշման 2-րդ կետը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

**2024 թվականի հունիսի 6**
**ք. Հրազդան**